

Հետ բարոյական կապ կարող է ունենալ, որին կարող է հաւատալ, որին կարող է սիրել: Մեր կամքից դուրս մեր գլխին նշանակված քաջանայի հետ մենք ոչինչ բարոյական կապ ունենալ չենք կարող. քաջանան քաղաքի այս կամ այն բաժնի ուստիկան չէ, որի օրինաւոր կարգադրութիւններին մենք պէտք է հպատակվենք, լինի այս մարդը Կիրակոսեան, թէ Մարտիրոսեան... Բաջանայի հետ մեր ունեցած յարաբերութիւնները բուն հոգեւոր յարաբերութիւններ են, որոնց որ և է պայմանի տակ զգելը ոչ թագաւորներ, ոչ էլ կաթողիկոսներ կարող են: Այդ հոգեւոր յարաբերութիւնների մէջ մարդը կատարելապէս ինքնիշխան է, կատարեալ տէր է և ոչ մի կաթողիկոս չէ կարող մեզ հրամայել խոստովանվել այս կամ այն քաջանայի մօտ, պատկերել այս կամ այն քաջանայի ձեռքով, մկրտել երեխային այս կամ այն քաջանայի ձեռքով: Դրա մէջ մեր ընտրութիւնը պէտք է կատարելապէս ազատ լինի, որովհետեւ դա մեր բուն հոգեւոր, ներքին բարոյական կեանքին է վերաբերվում, որի մէջ միջամտել իրաւունք չունեն ոչ հոգեւոր, ոչ էլ մարմնաւոր իշխանութիւնը: Յոյս ունենք որ Տէր-Յովհաննէսի ծուխը այդ ճշմարտութիւնը կը հասկանայ և այնքան ինքնա-

սիրութիւն կունենայ, որ տօնօրերին կը նախապատուի մնալ բոլորովին առանց քաջանայի, քան թէ ընդունել Լիւթիանի ձեռքով մեր գլխին բռնի կերպով նշանակված մի քաջանային:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻԼՈՍՈՖԻԱԿԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակները օր ըստ օրէ շատաւնում են ֆիլոսոֆիայի և նրա ղրկմունքները: Քանի որ քաջանայի և նրա ղրկմունքները լաւ գիտեանով թէ ինչքան դժբաղդութիւն կը լինի Անդրկովկասի համար, եթէ ֆիլոսոֆիան անցնի այնտեղ, կարծում եմ, որ աւելորդ չի լինի ծանօթացնել մեր հասարակութիւնը այդ չարքիւն և այն միջոցների հետ, որոնք դործ են գնվում դրան ջնջելու համար:

Եթէ ֆրանսիայում ուր թէ այդպէս նուրբիւն և թէ գիւղատնտեսութիւնը արհեստարարի շատ անգամ առաւել է զարգացած, քան թէ մեզանում, ուր առուներով և այլ զանազան գործիքներով ջուր են հասցնում անշուր տեղերը, որ շատ մեծ նշանակութիւն ունի ֆիլոսոֆիայի ջնջելու համար: Կարծիքս այն է, որ թէ ֆիլոսոֆիան և թէ ուրիշ միջոցները առաւել յարմարացրած են պատերազմելու այդ տեսակ չարքիւն հետ, եթէ այնտեղ ջնջելին ֆիլոսոֆիային, երբ նա բազմացաւ, միայն ջնջելով խաղողի այգիները, ինչ կը պատահէ Անդրկովկասին եթէ պատրաստ չը լինենք հենց արմատում ոչնչացնել, եթէ երեւայ ֆիլոսոֆիան:

Ասաց նա, տիկնոջ մի փոքր տկարութիւնն է, որի համար նա ոչ ոքի չէ ընդունում այսօր: Բացի դրանից, ասաց նա, այս գիշեր պատահել է տիկնոջ հետ մի անախորժ դէպք, և հաղորդեց նրա մազերի կտրվելու պատմութիւնը, աւելացնելով, թէ այդ շատ լաւ է պատահել, որովհետեւ դրա համար գուցէ կարողաքան խանի հարեմից մի քանի անգամ կնիկներ, որոնք միշտ նախանշվում էին Սիւրբի փառքին: Գալով դահճից ստացած տեղիկութիւններին, Գաւիթը ասաց, թէ դահճը ոչինչ չէ կարողացել յաջողացնել... միայն թաղցրեց, որ արգելաւորել եղել է Սիւրբին...

—Դա շատ վատ է... պատասխանեց ծիրանի մօրուքով մարդը և ընկղմվեցաւ խորին մտածութեան մէջ: Նրա բազմաձող դէմքից երևում էր, որ խնդրել խիստ ծանր և կարեւոր էր, թէ չուտով պիտի ոչնչանային ահագին յոյսեր, թէ այդ յոյսերը կախված էին մի պատահաւ մահից... որը չը յաջողվեցաւ...

Այդ փառահեղ մարդը կարմիր վառքի կամ երեցմանիկ աւանի մէջքը ֆրանսիական էր. հայոց հարուստ և աղքատութեան տէր իշխաններից մէկը:

—Այդ վատ եղաւ... կրկնեց նա փոքր ինչ վերջով լեզուի ձայնով: —Գրանից յետոյ մեզ ինչ է մնում անել... ես յոյս ունեմ, որ Գիւլիանը (դահճը) կը կատարէ մեր ցանկութիւնը... բայց բոլորը ոչնչացաւ...

Նա սպասում էր Գաւիթից ստանալ մի միւլի-թարական պատասխան, բայց այս վերջինը, չը նայելով իր ստատանայական խորագրութեանը, այն աստիճան չփոխված, այն աստիճան մոլորված էր մտքով, որ չը դիտէր, թէ ինչ խորհուրդ պէտք էր տալ:

Այդ երկու հայ մէլիքները հագնված էին բոլորովին պարօք աւազների ձեով, գլխներին դրած ունէին բոխարայի սև մորթից երկայն գլխակներ, հագել էին նուրբ մետաքսից կարմիր գոյնով կաշայ (պատմութեան), որ իջնում էր ծնկներից ցած, և նրա վրա կանաչ մահուկից ջիւրբայ (վերարկու), որ հասնում էր մինչև գետին: Մէլիքները պնդած էին Գիւլիանի դոյն-

և չաշխատեք ամեն տեսակ միջոցներով հեռացնել այդ ֆիլոսոֆիայի երեւալու դժբախտ օրը:

Իր առաւել լաւ երեւայ ֆիլոսոֆիայի բերած ֆեսալ, առաջ կը բերեմ թւերը: Մինչև 1865 թիւը ֆրանսիան տալիս էր ամեն տարի 448 միլիօն վեդրօ գինի, իսկ 1876 թուականին ամբողջ ֆրանսիայում հազար երեքսունք ստանալ 326 միլիօն վեդրօ: Ուրեմն 11 տարվայ միջոցումը այնպէս բազմացաւ ֆիլոսոֆիան, որ 112 միլիօն վեդրօ ֆեսալ հասցրեց ֆրանսիային: Ինչ կը պատահէր այս երկրի գինեգործութեան, եթէ հասարակութեան և կառավարութեան աշխատանքով չը ջնջէին ֆիլոսոֆիային, կամ մի ուրիշ կերպով չը քչացնէին նրա բերած ֆեսալը: —Ֆիլոսոֆիան բոլորովին աւերակ կը դարձնէր ֆրանսիայի խաղողի այգիները և սրա հետ կոչնչացնէր գինեգործութիւնը: Մի և նոյն էլ կը պատահէ Անդրկովկասին, եթէ այդտեղ էլ երեւայ և բազմանայ ֆիլոսոֆիան:

Բոլոր ասածն աչքի առաջ ունենալով, կարծեմ որ չեմ սխալվել ասելով, թէ այս միջատի երեւալը մեծ դժբախտութիւն կը լինի մարդը կովկասի համար: Եթէ մերկսը ահ ու դող տարածեց ամբողջ Անդրկովկասի բնակիչների մէջը, ինչ կանէ ֆիլոսոֆիան, որ շատ անգամ ահեղ և զօրեղ թշնամի է, քան թէ մորեխը, այդ ամեն մէկը լաւ կը հասկանայ:

Աւելորդ եմ համարում երկար խօսելով աշխատել հաստատել թէ մեզ հարկաւոր է ծանօթանալ այդ թշնամու թոյլ կողմերի և ջնջելու միջոցների հետ: Կասեմ մի քանի խօսք ֆիլոսոֆիայի կեանքի և ապա նրա ջնջելու միջոցների մասին:

Առաջին անգամ 1865 թ. ֆրանսիայում նկատեցին որթի մի նոր հիւանդութիւնը

և 1868 թուականին ֆրանսիացի ուսումնական Պլանշօն (Planchon) գտաւ և հիւանդութեան պատճառը—այն է ֆիլոքսերան: —Phylloxera vastatrix. նըրանից յետ անցաւ 11 տարի և խաղողի այգիների մեծ մասը դարձան աւերակ մինչև կը գտնէին նրա ջնջելու միջոցներ:

Այս միջատները ապրում են խաղողի որթի արմատի վրա և կերակրվում են արմատի մէջ եղած հեղուկով: Իրանք հազիւ հասնում են 1/3 զծաշափ մեծութեան, դեղնադոյն են և բոլորեքեան կարող են ձուածել առանց խառնակվելու: —սրանք առանձնավոր են «անտեռ մայրեր»: Ամառվայ միջոցում բազմանում են մինչև 6-երորդ սերունդ: Այն միջատները, որոնք դուրս են գալիս ձուերից աշունքին, այսինքն վերջին սերունդը—շատ անգամ փոքր են առաջիններից և առաւել մութ գոյն ունեն: Սրանք ձմեռը անց են կացնում արմատների ճեղքումներում կամ թէ արմատի կաշիի տակը, զարուկները գոյնը փոքր ինչ փոխում են մեծանում: Առհասարակ 8 օրից յետ ձուերից դուրս են գալիս փոքր միջատները, իսկ դուրս գալուց 8 օր անցած այս միջատները աճում են ձու: Բացի սրանցից մի և նոյն տեղում պատահում են էլի ուրիշ անհատներ. նրանք փոքր ինչ մեծ են նըկարագրածիցս և ունեն փոքրիկ թևեր: Սրանք ամբողջ կեանքը գետնի մէջ չեն անցկացնում ինչպէս առաջինները, այլ դուրս են գալիս այնտեղից, փոխում են կաշին, նոցա թևերը մեծանում են և այսպիսով նրանք կարող են լինում թռչել: Սրանք էլ նմանապէս գեղնագոյն են և ձու ածելու համար խառնակվելու կարեւորութիւն չունեն: Ձուերը աճում են սրանք որթի տերևների վրա թւով 3—5: Սրանց աճած ձուերը բոլորը միատեսակ չեն—մի քանիսը մանր

Ֆրանգիլին. պատրաստութիւններ էին տեսնվում պատեղելու այն մարդուն, որին առում էր ինքը, որի թշնամին էր. որը այսօր պիտի դար գնելու մի գերի, որի մահն էր ցանկանում ինքը...

—Ուրեմն պէտք է շտապել խանի մօտ, ասաց նա, աշխատելով ստանալիս երեւալ: —Քանի դեռ այդ անպիտանը չի եկել, պէտք է խանի հետ խօսել ինչ որ հարկաւոր է:

—Նա ճաշից առաջ չի գալ, պատասխանեց Գաւիթը: —մենք մի քանի ժամ ունենք մինչև ճաշ, այսու ամենայնիւ, պէտք է շտապել...

Երկու մէլիքները հազան իրանց թանգազին վերադառնալով, որոնց եզերքը զարդարած էին ոսկէ թեւերով. կապեցին իրանց արծաթապատ թրերը և սկսեցին դիմել դէպի խանի վրանը, խափանելու հարկաւոր հայ գերիների վրկութիւնը, որ ընկած էին մահմեդական բռնապետի ձեռքը... Մէլիք ֆրանգիլը, իբրեւ աւագ, զընում էր առաջ, իսկ մէլիք Գաւիթը, որպէս նըրանից աստիճանով կրտսեր, գնում էր նրա ետեկից: Նրանց հետևում էին մի խումբ ծառաներ, որոնց պարսկական սովորութեամբ իրանց հետ ման էին ածում: Ծառաները բոլորն էլ մի—մի սուր ունէին կապած, իսկ իրանց մնացած զենքերը թողել էին իջևանում, որ յատկացրած էր երկու մէլիքների ծառաների համար: Հանդիսաւոր «սալամը» առաջ էր ընթանում և ճանապարհին ով որ հանդիպում էր, նրանց գլուխ էր տալիս: Մէլիք Գաւիթը երբեք իր կեանքում այսպիսի եռանդոտ ոգևորութեամբ չէր դիմել դէպի մի ձեռնարկութիւն որպէս այսօր: Նա պիտի աշխատէր խափանել հարկաւոր հայ գերիների ազատութիւնը, նա պիտի ամեն ջանք դընէր մաշել ոչնչացնել նրանց խանի բանտերի մէջ: Մէլիք ֆրանգիլը մի և նոյն չար դիտաւորութիւնն ունէր, վրէժնորդութեան մի և նոյն արնոք տրամադրութեան մէջ էր գտնվում նա: Գրանք այնտեղակ մարդիկներից էին, որոնց մեծ հաճութիւն է պատճառում զապանային եղևնադործութիւնը, մանաւանդ երբ դործի մէջ խառն էին չափի փառքի և տիրական նպատակներ:

(Վեր շարունակվի)

են և մոյզ կարմրագոյն են, իսկ միւսները առաւել մեծ և դեղնագոյն են: Առաջին տեսակ ձուերից զուրս են գալիս արու միջատներ, իսկ երկրորդ տեսակ ձուերից էգ: Դուրս գալուց յետ սրանք խառնակում են և էգ միջատը դնում է միայն մէկ ձու, իսկ յետոյ մեռնում է: Պէտք է ասել, որ այս վերջինները ոչինչ չեն ուտում և կարծես ստեղծված են միայն խառնակվելու և ձու ածելու համար: Այս ձուն մեռնում է ամբողջ ձմեռը պահպանված վաղի ձիգըռածներում մինչև զարուհը և զարուհին զուրս է գալիս նրանից այն տեսակ միջատ որ նկարագրեցի սկզբից: Այսպէս կարծես ինքը բնութիւնը աշխատել է, որ Ֆիլոքսերայի սեւը չը ջնջուի: Եթէ ջնջնք այն միջատներին, որոնք արմատի վրա են ապրում, թեւեռաւոր Ֆիլոքսերան կը բազմացնէ նրանց:

Ֆիլոքսերան, որ ապրում է արմատի վրա, փշացնում է արմատը, նրա ծակած տեղերը սկսում են հաստանալ և վերջը փտում են, այնպէս որ վաղը մնում է առանց արմատի և չորանում է: Իսկ նրանք, որ ապրում են տերեւների վրա, ծակում են նրան, իսկ ծակած տեղերը կոշտանում են: Ֆիլոքսերան մեծ արագութեամբ է տարածվում: 1865 թուականին պատահում էր միայն Ֆրանսիայում, իսկ 1877 թուին անցաւ Աւստրիա, Շվեյցարիա և այժմ հասել է մինչև Ղրիմ: Պէտք է սպասել, որ մի քանի տարից յետ կը հասնի և Անգլիոյ: Սրանց ձուերը կարող են շատ տարածվել թէ վարակված որթերի հետ, թէ պտուղների, և վերջապէս քամիի օգնութեամբ: Ջնջելու միջոցները ներգործողները սրանք են:

1. Այգիները որոնք երեւցել է Ֆիլոքսերան ձմեռը հեղեղում են ջրով և թողնում են այնպէս մի 40 օր անընդհատ: Ցրտից և խոնավութենից արմատի վրա ապրող միջատները մեռնում են:

2. Գետներ ոռոգում են ջրով, խառնած ածխածնի հետ. սրանից էլ միջատները սատակում են, իսկ վաղերը չեն վնասվում: Բայց այս միջոցը երբեմն անօգուտ է լինում, որովհետեւ ածխածնով (сѣрнисѣтый углеродъ) շուտ է շողիանում: Այս պատճառաւ առաջարկում են գործածել ածխածնաթթւի կալի: (сѣрноуглеродистый кали): Այս վերջինը, եթէ $\frac{1}{25000}$ մասը խառնած լինի ջրի հետ՝ սպանում է 24 ժամում միջատին: Միայն սրա գործածելը շատ թանկ է և մարդ է պահանջում: Ամենից լաւ է, եթէ այս միջոցը գործ դնեն ձմեռը, երբ գետնում առանց այն էլ կայ շատ ջուր: Գործ են ածում այսպէս. իւրաքանչիւր քառակուսի արշիի վրա փորում են գետնը երեք կամ չորս վերջով խորութեամբ, այն ջուրը մէջ են ածում և նորից ծածկում են հողով:

Ջնջելով միայն միջատներին, որոնք ապրում են արմատների վրա դեռ չենք ազատվում բոլորովին Ֆիլոքսերայից: Հարկաւոր է նմանապէս ոչնչացնելու այն ձուերը, որ ածում է թեւեռաւոր Ֆիլոքսերան տերեւների վրա և վաղի ձիգըռածներում: Սրա համար որթի ձիգերը շոգիի ներգործութեան են ենթարկում, կամ տաք ջուր են ածում ձիգերի վրա. կամ թէ չէ ածում են ջրի հետ խառնած ածխածնով:

Բացի ասածիցս սրանց հետ կարելի է պատերազմել և ուրիշ կերպով: Խաղողի մի քանի տեսակներին սրանք ոչինչ վնաս չեն տալիս. այս պատճառով առաջարկում են տնկել այդ տեսակները և դոցա վրա պատուաստել ցանկացածները: Աւելորդ եմ հա-

մարում այստեղ թուել մի առ մի բոլոր այն տեսակները, որոնք անվնաս են մնում Ֆիլոքսերայից, կասեմ միայն, որ Ամերիկայի տեսակները ամենից լաւ են ընդիմանում նրան: Այս հարցի հետ առաւել մանրամասն ծանօթանալ ցանկացողները թող դիմեն պ. Յաբելի աշխատութեան (Пабель. «Гибель виноградинокъ») որտեղ կը գտնեն և Ֆիլոքսերայի պատկերները:

Կասեմ թէ ինչ միջոցներ պէտք է յանձն առնէ հասարակութիւնը, որ պատրաստ է բոլոր բնակիչներին ինչպէս հարկն է հանդիպելու այս թշնամուն: 1) Տպել փոքրիկ դրօշներ այս միջատի կեանքի և ջնջելու միջոցների նկարագրութեամբ և տարածել բոլոր գիւղերում: 2) Առանձին թերթերի վրա նկարած Ֆիլոքսերայի և հիւանդ որթերի պատկերները և նրա ջնջելու միջոցների համառօտ նկարագրութիւնը: 3) Ժողովրդական դասասօսում թիւները այդ հարցի վրա: Իսկ կառավարութիւնը իր կողմից պէտք է արգելի Ղրիմից և ուրիշ տեղերից որթ և խաղող բերել, իսկ այդ կատարելու համար նշանակել վերահսկողներ:

Հրաչեայ Տէր-Բ...նց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Գեղեցիկների 18-ին Ով որ բազմ ունի Պսակ, լրագրող կարգաւոր, թող առանձին ուշադրութիւն դարձնէ նրա 38 և 39-ը համարների առաջնորդը յօդուածին, որ պ. Պապազանեանցը քննում է վրոնը և նրա նշանակութիւնը ընդհանրապէս և ըստ իր ասութեան՝ պատմական—փիլիսոփայական կէտից, քաղելով իր ասածները պատմաբանի պ. Հռոմբովի այդ մասին գրված երկտարբերակները:

Յայտնի է, որ «Մշակը» հաղորդում է այնպիսի պ. Պապազանեանցի այն մտքի համար, թէ վրոնը համոզմունք է և թէ վրոնը անհատ թող իր հարողմունքով վայելէ իր երջանկութիւնը. ուստի և հարկաւոր չէ հալածել անհատներին և կամ թէ այդպիսի անհատներից բաղկացած խմբերին, որովհետեւ քրիստոնէութիւնը մեղ այդպէս է ուսուցանում. նա հաւանք է քարոզում և այն: Ես չեմ քննում որքան ուղիղ և կամ սխալ է այս հայեացքը, ես դարձնում եմ ընթերցողի ուշադրութիւնը միայն պ. Պապազանեանցի լօգիկայի վրա. ահա թէ ինչ է ասում նա: «Հին ազգերի կրօնը հիմնված էր մասնաւոր և ոչ մէկ ընդհանուր աստուածապաշտութեան վրա, որ ուսուցանում է քրիստոնէական վարդապետութիւնը բոլոր մարդիկներին...» և շարունակում է. «այդ սկզբունքի ընդունելութեան ենթ պարտական, որ հիմն ի վեր տալով այն վտանգաւոր պարիսպը, որ մինչ ցարդ բաժանում էր մի մեծանց ից մարդկային սեռի դանաղան ցեղերը»:

Բայց դեռ: Պ. Պապազանեանցը իր յատուկ ոճով շարունակում է. «այդպէս վարդապետութիւնը խառնելու ու տգիտութեան մէջ խեղդուածներին, տարածում էր, մինչև որ բարբարոս ազգերը արշաւելով, ճշմարիտ լուսաւորութիւնը խրտն եցրին հրապարակից»: Գետն: «Այդպէս ուրեմն, շարունակում է մեր փիլիսոփան, «կրօնական գործերում ամենամանրան միջամտութիւնն անգամ, լինի նա մի ամբողջ վարդութիւն կամ մի սակ մի ամբողջ վարդութեան կողմից» (կամ մի ընկերութիւն) մարդու հեռացում է աստուածապաշտութիւնից: հետեւաբար և նա դառնում է միայն մի գործիք անձնական բարօրութեան յաջողութեան ու յառաջագիտութեան համար»:

Վերջապէս այդ տողերից յետոյ Գ. Արծրունուն մի լաւ հայտնում է և յօդուածը վերջացնում այսպէս. «Վրոնը իրեն բուն նշանակութիւնում անհատական է և հիմնվում է միայն իւրաքանչիւր անհատի իրեն ներկայացնելու առանձին եղանակի վրա»:

Պատմական-փիլիսոփայական յօդուածի մէջ եթէ հասկանալի տեղեր կային, վերոբերեալներն են. մնացած կտորները կամ բոլորովին անհասկանալի են, կամ բոլորովին անմիտ բառեր են և կամ թէ բոլորովին չեն վերաբերում այժմեան կրօնական բանաբանութեան, որ շարունակվում է «Մեղուի» և «Մշակի» մէջ:

Վերջերեւակ կտորներից երեւում է, որ կրօնը հիմնված է անհատական համոզմունքի վրա. տեսնում ենք որ ոչ ոք չը պիտի միջամտէ ուրիշի կրօնական համոզմունքի. տեսնում ենք որ հին ազգերի կրօնը էր բաժանում մարդկային սեռի զանազան ցեղերը միմեանից:

Պ. Պապազանեանց, եթէ դուք ընդունում եք որ վրոնը անհատական է, էլ ինչու եք հայտնում մի և նոյնը քարոզողներին. եթէ դուք հիմնում եք կրօնը միմյայն անհատական համոզմունքի և ըմբռնութեան եղանակի վրա, էլ ինչու եք հայտնում այն անհատներին, որ այլապէս են ըմբռնում կրօնը, քան թէ դուք. եթէ համոզված եք որ հին ազգերի կրօնը էր միայն ընդունակ բաժանելու «մարդկային սեռի զանազան ցեղերը», էլ ինչու համար եք ջատագովում և պաշտպանում այն սկզբունքը, որ քրիստոնէայ հայերին բաժանում է միմեանից, եթէ համոզված եք որ քրիստոնէական վարդապետութիւնը տալով այն վտանգաւոր պարիսպը որ բաժանում էր «մարդկային սեռի զանազան ցեղերը», հապա ինչով եք բացատրում մի և նոյնը ազգի քրիստոնէայ անդամների մէջ եղած բաժանմունքները, էլ չեմ ասում զանազան ցեղերի միմեանից բաժանվելը մի և նոյն քրիստոնէական վարդապետութեան աշակերտելով հանդերձ:

Ինչպէս երևում է, պ. Պապազանեան, դուք ձեր համոզմունքներին էլ չեք հետևում. դրա պատճառը կարծում եմ ես այն է, որ ձեր համոզմունքը ձեր գլխի մէջը չէ, այլ զանազան գրքերի մէջն է: Եթէ դուք ամեն երանք էլ այնպէս լաւ սովորած լինէիք ինչպէս հայտնաւորեցիք, այն ժամանակ հինգ դիպում էլ աւելի կունենայիք:

Նորայր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Մշակի» հետեւալ համարը կը հրատարակվի գեղեցիկների 27-ին, իսկ վերջին համարը այս տարվայ մէջ գեղեցիկների 30-ին:

Ստացանք Կովկասեան ուսումնարանական վարդութեան պ. հոգաբարձուից 79 թուրք, որ հանդանակած են իրանց մէջ ԲԱԳՈՒԻ ԲԵՂԱԿԱՆ դպրոցի աշակերտները յօդուած վանի սովորածը հայերի: Նուիրատուների ցուցակը կը տպւնք:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեղ գրում են, որ այդտեղ հայի գինը կիսով չափ ընկել է. ալիւրի խաւարը, 30 պուլ, ծախվում է 50 թուրքով, ցորենի խաւարը 36—40 թ., իսկ գարու խաւարը 25—28, կամ 30 թուրք: Միւր թանգ է, այսինքն ֆունտը 7 կոպէկով: Խաւար և յարդը շատ է ծանր և քնող բոլորովին չը կայ: Այս տարի Նոր-Բայազետի կլիմայի մէջ մեծ փոփոխութիւն է նշմարվում. սովորական բուքերի, ձիւնի և ցրտերի փոխարէն տեսնել է գեղեցիկ և մինչև այս օր չը տեսնեմք եղանակի, թէ և մի երբու անգամ բարակ ձիւն եկաւ, բայց կարճ միջոցում կրկին հալվեց:

Մեղ գրում են ՕՐԳՈՒԲԱՅԵՏԻՑ: «Անցեալ ամառը այցելեց մեր դպրոցը ժողովրդական ուսումնարանների կառավարիչ օգնականը: Թէ հասարակութիւնը և թէ ուսուցիչները շատ զոհ մնացին պարտի վարմունքից և օգտակար խորհուրդներից: Նախկին օգնականը վարում էր կոշտ պոլիցիական կերպով թէ աշակերտներին և թէ ուսուցիչներին հետ, իսկ սա բոլորովին հակառակ, մեղ մարմնով ունի»:

ՕՐԳՈՒԲԱՅԵՏԻՑ մեղ հաղորդում են, որ գաւառապետի օգնական պ. Սուլթանովը ջանքերի ջնդրով, Օրդուբայի և նրա շրջակայների այժմ բաւական ապահով գրութեան մէջ են աւազակների կողմից: Նոյնպէս հացը քնող չարչիւններին դրսեւոր կարգադրած է որ որոշեալ գինը աւելի ոչ ոք ցորեն չառնի, այնպէս որ այժմ ուսուցիչների գները օրից օր իջնում են:

Պ. Ալեքսանդր Արարատեանց, որ նորերումս հրատարակեց մի գիրք «Բնարկի Մանկական» և այդ գրքի մի օրինակը մեր խմբագրութեանն ընծայեց, խնդրում է մեղ տպել հետեւեալ յայտարարութիւնը: «Այդ գիրքը պատրաստված է թէ քաղաքների և թէ գիւղերի ուսումնարանաց աշակերտներին և աշակերտութեան համար: Իւրեւն պարզ և հասկանալի է, բովանդակած նիւթերը բազմակերպ ու հետաքրքիր մանկների համար: Գրքի գինը 40 կոպէկ է ամեն տեղ իսկ դուռնաբով առնողներին զիջում կը լինի: Ծախվում է Թիֆլիսի բոլոր հայ դպրատաններում և ինձ մօտ, գինը այս հասցեով. Тифлисть, у чина Алекса́ндръ Араратя́нцу, на Фоминой улицѣ, № 15, до́мъ Григоріа Давришова»:

Գրքը տպված է ներկայ 1880 թվին Թիֆլիսում, Հ. Էնֆիանեանի և ընկ. տպարանում: Այդ գրքի մասին «Մշակը» կը յայտնի իր կարծիքը:

ՏԱԳԱՆՐՈՒԹՅՈՒՆ ստացանք 20 թուրք յօդուած վանի սովեականի հետեւալ անձերից: Պողոս Սալթիկեան 5 թ., Խաչատուր Պարսեան 1 թ.,

Մի ոմն 1 թ., Գաբրիէլ Պապայանով 1 թ., Մի ոմն 1 թ., Յովսէփ 1 թ., Յովսէփեան Մանուկեան 40 կոպ., Մի ոմն 1 թ., Նավում Ունանով 3 թ., Խաղարութեան 50 կոպ., Յակոբ Միսերով 50 կ., Աստուածատուր Լուսինեան 50 կ., Նիկիտա Բօբով 1 թ., Սարգիս Անանեան 1 թ., Արգար Անանեան 1 թ., Մի ոմն 1 թ., Ալեքսէյ Սակիով 30 կ., Ալեքսանդր Գառնամիշով 20 կ., Մատթոն Գառնամիշով 10 կ., Բնդամիշ 20 թ., 50 կ., որից 50 կ. փոստի ծախսը հանելով, մնում է գումար 20 թուրք:

Ստացանք ԴԵՐԵՆՏԻՑ պ. Գասպար Ամիրխանցից 10 թուրք յօդուած վ. Պօլսի «Միացեալ հայոց ընկերութեան»:

Ստացանք պ. Գեորգ Դանաղաբեանց զը Դափուրից, Գեղեցիկից 10 թուրք նրա տարեկան սուրբը յօդուած «Միացեալ ընկերութեան»:

Շուշեցի Ասատուր Աղամեանց ուղարկելով մեզ ԱՍՏԱԽԱՆԻՑ 25 թուրք, գրում է մեղ հետեւեալ նամակը: «Գեղեցիկից «Մշակի» 206 համարի առաջարկութիւնը Միացեալ ընկերութեան և ան օգտին փոխանակ միանալով նուէրների տարեկան թէկուզ աւելի փոքրիկ վճարներով նպաստելու, ահա նուիրելով այս տարի քսան և հինգ թուրք, որ ուղարկում եմ ձեզ այն նամակովս, խոստանում եմ նոյն գումարը անհայտ տարի անխախտ հասցնել ձեր խմբագրութեանը յիշեալ ընկերութեան օգտին»:

Շնորհակալութեամբ ստացանք Ստեփանոս աւագ-քահանայ Տէր-Ստեփանեանցի նրա հրատարակութիւնը «Սղոմբ» քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանայց եկեղեցւոյ: Դա գրքի երկրորդ ապագութիւն է և յարմարեցրած է ծխական ուսումնարանների բոլոր բաժանմունքների և միջնակարգ դպրոցների առաջին դաստանների համար: Տպված է Թիֆլիսում 8. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1880 թվին:

Պ. Աղամեան ԱՍՏԱԽԱՆԻՑ մեղ գրում է: «Կարգաւոր լրագրից 199 համարում ձեր հրաւերը մարդկանց մի խումբ կազմելու, որոնք կամաւոր նուիրատուութեան օժանդակութեամբ կարգանան մի ընդունակ մարդ պահել Հայաստանում, Կ. Պօլսում կամ Եւրոպայում, որ թղթակցի անդադար հայերի մասին եւրոպական լրագրիներին և համակրելով այդ գործին, խոստանում եմ, երբ կը կազմել այդ տեսակ խումբ, այն օրից սկսած անդամական վճար հասուցանեմ այդ խմբին տարեկան սպան թուրք, քանի որ գոյութիւն կունենայ դա»:

ՄԵԼԵՎԻ ՀԵՌԵՐԻՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 23 գեղեցիկների: Լուր է տարածված, որ բանկի կառավարիչ Լաւանսկի շուտով կը թողնի իր պաշտոնը:

ԼՈՆԴՈՆ, 23 գեղեցիկների: Իրլանդիայից հաղորդում են, որ ի նկատի ունենալով իրլանդական գաղանի ընկերութեան և իրլանդական Լիբերալի և Իրլանդական մէջ գէներերի պահանջները կազմելու համար, կառավարութիւնը ձեռնարկել է նախագրողական ընդարձակ միջոցներին: «Խոր վերջին» նախ տակ տարբերներ են դուրս Այդ գործը ֆենիաններին են վերաբերում:

Կ. ՊՈԼԻՍ, 23 գեղեցիկների: Երէկ պետութիւնների գեսպանները ներկայացրին Բ. Գրանը միաձայն գրութիւն միջնորդ դատարանի մասին:

ԱՌԵՆ, 23 գեղեցիկների: Ասում են, որ պետութիւնները նորից համաձայն առաջարկութիւններ արին յունական կառավարութեանը միջնորդ դատարանի մասին: Շուտով ծառայութեան կը հրաւիրվեն պահեստի գործերը և ժողովրդական գլխարկան, որի գլխուղերը 30—40 տարեկան հասակի կը լինեն:

ՓԱՐԻՑ, 23 գեղեցիկների: Միջնորդ դատարանի մերժելը Բ. Գրան կողմից սրա վերջնական խօսքը չէ կարելի համարել: Ռուսաստանը և Անգլիան հաստատապէս պաշտպանում են Ֆրանսիական կառավարութեանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 22 գեղեցիկների: Պետական բանկի 5% տոմսով առաջին շրջանի արժէ 95 թ., 25 կ., երկրորդ 93 թ., երրորդ 93 թ., 25 կ., չորրորդ 93 թ., 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսով արժէ 226 թ., 25 կ., երկրորդ 219 թ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսով արժէ 91 թ., 25 կ., երկրորդ 91 թ., 37 կ., երրորդ 91 թ., 37 կ., ոսկի 8 թ., 2 կ.: Ռուսաց 1 թուրք 1 լոնդոնի վրա արժէ 25,3 պէնս, ռուսաց 100 թ., շաբաթը վրա 213 մարկ 75 պֆ., գարիկի վրա 264 Ֆր. 25 անստիմ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1881

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.

[illegible]

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.